* * *

Ինչ-որ մի ժամանակ մարդն ուզեց ինքն իրեն ճանաչել ու հորինեց թատրոն:

* * *

Լավ կարած կոշիկը, լավ մշակած հողը, տաշած քարը, մի խոսքով՝ ամեն մի լավ արված գործ դառնում է ստեղծագործություն, դառնում է արվեստ:

* * *

Ուրիշի թերություններն ուռճացնում ենք, որ մեր սեփականը նսեմանա...

* * *

Իհարկե, մեզնից առաջ ամեն ինչ ասված է, բայց ամեն ինչ տրված չէ...

* * *

Թերագնահատվելը ցավ է, գերագնահատվելը՝ դժբախտություն:

* * *

Եթե հրաժարվենք Արցախից, եթե մոռանանք 15 թվականը, կդադարենք ազգ կոչվելուց, կամովին կիջնենք պատմության բեմից...

* * *

Իմ ժողովրդին սիրելը ցեղային իմ պարտքն է ու իրավունքը, մյուս ժողովուրդներին հարգելը՝ մարդկային իմ պարտականությունը:

* * *

«Պետք լինել» մարդու հոգու գլխավոր շարժիչ ուժն է և լինելու իմաստը: Հայր ես, պետք ես քո զավակներին, որդի ես՝ պետք ես քո ծնողին, ընկերներին, հասարակությանը, քո պետությանը...

Բովանդակություն

Հայ բեմի նահապետը. Կենսագրական ակնարկ 3
Լակոտը (խմբագիր՝ Աղասի Մկրտչյան) 19
Ոտնամաններս (խմբագիր՝ Զարուհի Մխիկյան) 99
Ընդհատում (խմբագիր՝ Ֆելիքս Մելոյան).....125
Լուսանկարներ.....305
Ասույթներ Սոս Սարգսյանից..... 313